| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 26 | Հունիս | 2019 թ. | | Ա | 4760355341 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | |
| 26 | Հունիս | 2019 թ. | | Ճշգրտվող հաշվի | |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 48102018 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354

(անունը, ազգանունը)

26/06/2019 14:45:41

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**Հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին**

*ք.Արմավիր*

*<05> փետրվարի 2019թ.*

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս վերանայելով վարույթում քննվող թիվ 48102018 քրեական գործի նյութերը՝

*Պ Ա Ր Զ Ե Ց Ի*

2018թ. փետրվարի 24-ին՝ ժամը $12^{25}$-ին, <<Արմավիր>> ԲԿ-ից հաղորդում է ստացվել ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժին այն մասին, որ հրազենային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Աղամ Աբելի Մովսիսյանի դիակը:

24.02.2018թ. կատարված դեպքի վայրի զննությամբ Արմավիրի մարզի Արգավանդ գյուղի բնակիչ Աղամ Աբելի Մովսիսյանի տան բակային հատվածում կայանված <<Վազ 21 011>> մակնիշի ավտոմեքենայի առջևամասում հայտնաբերվել է երկփողանի որսորդական հրացան, որի դեպի հրացանի խզակոթը հարող ձգանին ամրացված է եղել մետաղալար, իսկ դրա մյուս ծայրը ամրացված է եղել <<Վազ 21 011>> մակնիշի ավտոմեքենայի առջևամասի վահանին ամրակցված գալարաձև մետաղալարին: Զննության մասնակից Աղամ Մովսիսյանի կին Զվարթ Մխիկի Մովսիսյանը հայտարարել է, որ 24.02.2018թ. ժամը $12^{00}$-ի սահմաններում, երբ տան բակային հատվածից կրակոցի ձայն է լսել ու դուրս է եկել տնից, տեսել է ամուսնուն ավտոմեքենայի դիմաց՝ մեջքի վրա ընկած վիճակում, իսկ նրա կողքին ընկած է եղել հրացանը:

Դեպքի առթիվ 24.02.2018թ. ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 48102018 քրեական գործը, Աղամ Մովսիսյանը ճանաչվել է տուժող:

24.02.2018թ. տուժող Աղամ Մովսիսյանի կինը՝ Զվարթ Մխիկի Մովսիսյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ 1975թ. ամուսնացել է Աղամ Մովսիսյանի հետ և համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են չորս երեխա՝ երեք տղա և մեկ աղջիկ: Երկու որդիներն ու աղջիկն ամուսնացել են և բնակվում են առանձին, իսկ կրտսեր որդին՝ Աբրահամը, բնակվում է իրենց հետ համատեղ: Ամուսինը վերջին շուրջ 5 տարին ամեն օր 0,5 լիտր քացախ է խմելիս եղել, բացի այդ սպիրտով, լիմոնով, սխտորով լուծույթներ է պատրաստել և խմել, ասելով, որ իրեն այդպես լավ է զգում: Ամուսինը հոգեկան որևէ հիվանդությամբ չի տառապել, բայց վերջին շրջանում դարձել է շատ բռնկվող և ամեն ինչից շուտ բռնկվել է: Նախկինում նա ինքնասպանության փորձ չի կատարել: 2-3 օր է ինչ նրա մեջքը բռնվել է ու շատ է բողոքել մեջքի ցավերից ասելով, որ այդպես ապրելն ում է պետք, եթե չի կարողանում ազատ տեղաշարժվել: Առավոտյան, երբ քնից արթնացել

կրակոցը կատարվել է մարմնի երկայնական առանցքի նկատմամբ առջևից հետ, քիչ վարից վեր ուղղությամբ: Հրազենային կրտորակային վերքը ստանալու պահին Ա.Մովսիսյանը կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսով ուղղված է եղել դեպի կրակոց արձակող զենքի փողաբերանի առաջային կտրվածքը: Կրակոցը կատարվել է տվյալ զենքին բնորոշ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններում: Ա.Մովսիսյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ դիակի սկզբնական դիրքի փոփոխության մասին վկայող տվյալներ չեն հայտնաբերվել: Թվով 3 կլորավուն օտար մետաղական մարմին հայտնաբերվել է դիասեղանի վրա՝ դիակի շուրջը: Ա.Մովսիսյանի դիակից վերցված արյան մեջ սպիրտներ, թմրանյութեր, հոգեմետ նյութեր չեն հայտնաբերվել: Ա.Մովսիսյանը կենդանության օրոք տառապել է չափավոր արտահայտված ընդհանուր աթերոսկլերոզով, որը չի գտնվում մահվան հետ պատճառական կապի մեջ:

25.02.2018թ. ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ Արմավիրի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժանմունքից գրություն է ստացվել այն մասին, որ Ադամ Մովսիսյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ հայտնաբերվել է թվով 1 հատ օտար մետաղական մարմին, որը գտնվում է Արմավիր ԲԿ-ի դիահերձարանում:

Նույն օրը որոշում է կայացվել և դատաբժշկական բաժանմունքից առգրավվել է 1 հատ մետաղական կլորավուն մարմին:

25.02.2018թ. որոշում է կայացվել Աբրահամ Ադամի Մովսիսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին:

Տուժող իրավահաջորդ Աբրահամ Մովսիսյանը, ինչպես նաև վերջինիս եղբայր Ավետիս Ադամի Մովսիսյանը ցուցմունք են տվել այն մասին, որ իրենց հանգուցյալ հայր Ադամ Մովսիսյանը բնակվել է իրենց մոր և Աբրահամ Մովսիսյանի հետ միասին: Իսկ իրենց ավագ եղբայրը՝ Պետրոս Մովսիսյանը և քույրը՝ Ծաղիկ Մովսիսյանն, ամուսնացել են ու բնակվում են իրենցից առանձին: Պետրոսը շուրջ 18 տարի է ինչ բնակվում է ՌԴ-ում: Իրենք իրենց հոր երկրորդ կնոջ երեխաներն են, իսկ առաջին կնոջից հայրն ունեցել է մեկ որդի՝ Սանասար Մովսիսյանը և մեկ դուստր՝ Ռոզա Մովսիսյանը, ովքեր բնակվում են իրենց գյուղում և նրանց հետ իրենք գտնվում են եղբայր-քույր հարաբերությունների մեջ և այսքան ժամանակ իրենց մեջ որևէ տարաձայնություն չի եղել: Հայրը շատ ինքնամփոփ անձնավորություն է եղել և իր պրաձների կամ մտածմունքների մասին երբեք չի կիսվել որևէ մեկի հետ, բայց միևնույն ժամանակ նա իր խոսքի տեր մարդ է եղել: Հայրը մոտ 5 տարի է ինչ զբաղվել է ինքնաբուժությամբ, սակայն թե ինչն է բուժել իրենք այդպես էլ չեն հասկացել, քանի որ նա որևէ հիվանդությամբ չի տառապել, միայն՝ 2017թ. դեկտեմբեր ամսին նա ենթարկվել է ճողվածքի վիրահատության, սակայն վիրահատությունից հետո նա իր ծնոտով ու ոտքով է եղել: Վերջին ժամանակաշրջանում հայրը մեջքի շրջանում ցավեր է ունեցել և դրանք մեղմելու նպատակով մեջքին "Յախու" է դրել: Հայրը շատ է օգտագործել քացախից ու սպիրտներից իր իսկ կողմից պատրաստված դեղամիջոցներ ու խմել, նա կենտրոնացած է եղել իր

# ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթիս թիվ 48102018 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

- ✓ Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել Արամ Մովսիսյանը մահվանը նախորդող ժամանակահատվածում:
- ✓ Ինչպիսի՞ անհատական-հոգեբանական առանձնահատկություններ է ունեցել Արամ Մովսիսյանը:
- ✓ Արամ Մավսիսյանը հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել, երբվանի՞ց և այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե՞ ոչ:

3. Փորձագետներին խնդրվում է պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև ընդգրկված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության կատարման ընթացքում, կմտնեն նրանց իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության փաստեքության ապահովման համար:

4. Փորձաքննություն կատարելու համար փորձագետներին տրամադրել սույն որոշումը, իսկ քրեական գործի նյութերը կտրամադրվի լրացուցիչ:

5. Հանձնարարել փորձաքննությունների հանձնաժողովի նախագահին՝ ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեկան օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ [signature] Բ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ